

դէն ու նոյնքան միամիտ հաւատքէն, ոչինչ ունէր իր անձին վրայ ամբողջներու առաջնորդէն, արմատապէս վիրաւոր ըլլալուն՝ հասակէն ու նոյնքան անուղղայ մեծագար մը՝ խօսելու մարմաջէն, որ մեր տկարութիւնները ամէնէն շատ ու շուտ կը նետէ կրկէս) կը պաշտպանէին հայ եկեղեցին, որմէ ուծացում մը վճռական կորուստ կը նկատէին մեր ցեղային դիմագիծութեան, Մաթիկին հոգիին մէջ առաջ բերելով ամէնէն ծանր կործանումը: Կը պաշտպանէին Էջմիածնի նուիրապետական հեղինակութիւնը, հակառակած ըլլալու համար ազատական Մաթիկին, ինչպէս նաեւ ծառացած ըլլալու համար երէցներու դատին, որոնք տեղական, բայց շատ բիրտ հայրենասիրութեամբ մը չէին կրնար մոռնալ դարաւոր Աղթամարը ու չէին ծածկեր իրենց ջերմ հաւատքը օր մը հոն, պատմական կղզին փոխադրուած տեսնելու «զհայրապետութիւն հայոց», երբ ուսական հետզհետէ աճող բոնութիւնը վտանգի տակ դնէր անոր անկախութիւնը: Ամէն վիճաբանութիւն պէտք ունի հասարակ տեղիքներու մեծ սթոքի մը: Նախնական մարդոց համար հասարակ տեղիքը յուռութիւնք մը աւելի զօրաւոր կը հնչէ: Ինչ որ Սահմանադրութեան յաջորդ սերունդէն թափանցած էր մինչեւ այդ խորշերը, մեծ բան մը չէր կրնար ըլլալ, քանի որ դպրեվանքի իմ ընկերներս փաստն էին ատոր: Այնպէս որ՝ այդ վիճաբանութեանց ծանրութիւնը կեդրոն ունէր վաթսունի սերունդին սահմանադրական ազատական իրաւակարգը, զայն գտնելով լիովին բաւող մեր հասարակական բարեշրջման: Ընկերվարութիւնը: Բայց այո՛: Ապագայի կրօնքը: Ով կ'ուրանար ատիկա: Առայժմ Վանը՝ սակայն: Վանը՝ մա'նաւանդ շուկայէն, հողէն, ազատութեան բերելիք բարօրութենէն: Կանխահաս էր ազատութեան գաղափարը կապել այդ կրօնքին, որ ամբողջն ուժը կարող էր կիսել ու վնասել յեղափոխութեան մասսայացման: Խտութիւն ու խորութիւն: Միայն աքաղաղները չէ, որ քաղաքի մը մէջ նոյն ձայներանգը ունին, այլեւ անոր վիճաբանողները, իրարու հարազատ կրկնու-